

Ճանապարհորդուհի Միրանդան

հեղինակ՝ Դոնալդ Բիսեթ

թարգմանիչ՝ Կարեն Ա. Սիմոնյան

Եղել է, չի եղել, Աֆրիկայում մի բաղ է եղել: Ճիշտը որ ասենք, նա անգլիական բաղ էր, քանի որ ծնվել էր Անգլիայում ու անունն էլ Միրանդա էր:

Նա վաղուց էր երագում հայրենիք վերադառնալ, որովհետև շատ էր ուզում իսաղալ անգլիացի տղաների ու աղջիկների հետ:

Ուստի նա հրաժեշտ տվեց իր բարեկամներին, թեև շատ ծանր էր այդ բաժանումը: Հրաժեշտ տվեց առյուծներին, վագրերին, կապիկներին, միայն թե՛ ոչ կոկորդիլոսներին: Նա կոկորդիլոսներին հանդուրժել չէր կարողանում:

Եվ համարձակ ճամփա ելաւ:

Երկար, շատ երկար նա թռչում էր ջունգլիների վրայով, իսկ հետո երեւաց ծովը:

Միրանդան թռավ հասավ Իտալիա: Ծովափին շատ երեխաներ կային: Նրանք իսաղում էին ավազով, իսկ քիչ հեռու նստած ծնողները ոչինչ չէին անում: «Ի՛նչ հիմար ու անարդարացի բան է»,— մտածեց Միրանդան:

Հետո նա թռավ հասավ Իտալիա: Ծովափին շատ երեխաներ կային: Նրանք իսաղում էին ավազով, իսկ քիչ հեռու նստած ծնողները ոչինչ չէին անում: «Ի՛նչ հիմար ու անարդարացի բան է»,— մտածեց Միրանդան:

Հետո նա թռավ սարերի վրայով ու պարզ է, որ ստիպված դեպի վեր ու ավելի վեր էր բարձրանում: Իսկ ավելի վերելում ցուրտ էր ու ձյուն էր տեղում:

Հանկարծ նա լսեց, որ մեկը երգում է: Չայնը լսվում էր մոտիկից ու ավելի մոտիկից: Նրան թվաց, թե երգում են ֆրանսիական Սյուրյոֆոն դ'Ավիլյոնը», որ նշանակում է «Ավիլյոնի կամրջի վրա»:

Եվ իրոք, քիչ անց, մառախուղի միջով սուրաց ֆրանսիացի ծիծեռնակների երանը, որը թռչում էր դեպի հարավ՝ Իտալիա: Միրանդայի մոտով անցնելիս, նրանք թեւերը թափահարելով, ջերմորեն ողջունեցին: Եվ Միրանդան էլ նրանց պատասխանեց՝ իր թեւերը թափահարելով:

Նա շատ էր հոգնել եւ ուտել էր ուզում: Ձյունը ավելի սաստիկ էր տեղում, եւ ոչինչ տեսանելի չէր: Ականջների մոտ սուլում էր քամին, ձյունը կուրացնում էր աչքերը, թռչելն ավելի ու ավելի էր դժվարանում: Բայց Միրանդան մտածում էր լոկ այն մասին, թե որքան լավ է ամառը անգլիական ճահիճներում, ու շուտափույթ հանդիպում էր երագում անգլիացի երեխաների հետ: Նրա կտուցն ուղղված էր Լոնդոնի կողմը:

Այդպես նա թռչում էր շատ երկար ժամանակ: Քամին հանդարտվեց աստիճանաբար, ձյունն էլ դադարեց տեղալուց: Եվ իր գլխավերեւում Միրանդան աստղեր տեսավ, իսկ ցածում՝ մեծ քաղաքի թարթող լույսերը:

Դա Լոնդոնն էր:

Միրանդան վայրէջք կատարեց քաղաքի լճակի վրա:

Լճակի կենտրոնում մի կղզյակ կար, իսկ կղզյակի վրա՝ ազատ մի բույն. ասես միտումնավոր նախապատրաստել էին հենց Միրանդային համար: Միրանդան շատ ուրախացավ:

Նախաճաշեց ճահճային խոտերով, հետո նստեց բնում ու արդեն սկսել էր ննջել, երբ հանկարծ լսեց մի ձայն.

— Միրանդա՛ ... Միրանդա՛ ...

— Այստեղ եմ,— պատասխանեց Միրանդան:

Նա ելավ բնից ու լողաց դեպի լճափ: Այստեղ նա տեսավ փոստատար տղային:

— Հեռագիր ունես,— ասաց տղան:— Խնդրում եմ, ստորագրիր, որ ստացել ես:

Միրանդան ստորագրեց: Հետո հեռագիրը կտուցին, լողաց դեպի ետ, դեպի իր բույնը:

Նա հուզմունքով բացեց հեռագիրը: Պարզվեց, որ հեռագիրն ուղարկել են աֆրիկացի տղաներն ու աղջիկները: Ահավասիկ, թե ինչ էին նրանք գրել.

Միրանդա, Միրանդա, բարեւում ենք քեզ:

Մաղթում ենք շոգ ամառ: Դու քեզ լավ նայիր:

Մենք քեզ սիրում ենք: Շուտ պատասխանիր:

Դիմացի փողոցի տներում մարեցին լույսերը: Միրանդան լսեց, թե ինչպես են մարդիկ իրար բարի գիշեր մաղթում: Հետո շուրջը լռություն տիրեց: Միրանդան հեռագիրը թաքցրեց մի թելի տակ, գլուխը՝ մյուս թելի եւ խորը քուն մտավ:

